

ԲԱՆԱՍՏԵՂԾՆԿԱՆ

ԼԵՌՆԷՆ ՎԱՐ

Վ.Ս.ՎԷ. Վ.Ս.ՎԵՍՆԻՆ

Յոգնամ ու տըրտում,
Տըրտում՝ բայց արի,
Կ'եկէր Աբրահամ
Լեռնէն սրբազան:
Վաթսուն տարիներ ըսպասած էր ան
Անշէջ հաւատքով
Խոստացուած մանկան.
Որ վերջալուստող իր ծերութեան դէմ
Բացուէր այգաշող:
Վաթսուն տարիներ անվարան նայած
Յամնցող յոյսին,
Օրրելով սիրան իր աստղերու երգով:
Ու հրաշքէն վերջ, Ողորմած Աստուած,
Զայն լեռը հանել զոհելու համար:

Յոգնամ ու տըրտում,
Տըրտում՝ բայց արի,
Կ'եկէր Աբրահամ
Լեռնէն սրբազան:
Ու կը մըտածէր օրերուն ոսկի,
Երգերուն ուրախ, յոյգերուն կըրակ.
Բոլորը անցան,
Արցունք ու մոխիր ծըգելով միայն:
Ու յիշեց մէկէն, ծընունդը մանկան,
Եւ ժրպիտն անոյշ Սառայի դէմքին
Բացած իր թեւեր:
Առջեւէն անխօս կ'երթար Իսահակ:

Արեւածագին մեկնած էր տունէն,
Հեռու շատ հեռու
Լեռներէն անդին:
Կը նայէր նըկուն կարմիր արեւին,
Որ լերան վըրայ կը պատարագուէր:
Բըլուրներուն շուրջ, ու ձորերուն մէջ
Ոչինչ կը շարժէր:
Իր շըրթունքներուն աղօթքը՝ սառած:
Արեւն արիւնոտ Դագաղ մ'էր ղըրուած
Լեռներու ուսին:
Իր քովէն անխօս կ'երթար Իսահակ...:

... Բարձունքին վըրայ հասեր են արդէն,
Զաւակին հետ լուռ.
Մահուան չափ արի,

Երկնքին չափ սէր,
Աբրահամ կեցած էր Աստուծոյ դէմ
Դաշոյնը ծնունդ,
Խոնարհած զըլխուն վերեւն իր տըղուն:

Երբ ծիծաղածայն հազար ծընծղաներ
Հնչեցին ուժգին,
Ու երկնքին տակ լերան իսկ վերայ
Հասուերն անծանօթ,
Տեսիլք հըրեղէն,
Ափն իր երկարեց անոր դաշոյնին,
Ու կարկեց ուժգին:

Իսահակ անխօս կը դիտէր իր հայր...:

* * *

Քայքայուած, տըրտում,
Կ'իջնէր Աբրահամ
Լեռնէն սըրբազան:
Հագիւ տըրտփող իր հոգիին մէջ
Կը փայլակէին հազար դաշոյններ:
Տարած էր իր սէրն երկնքի կանչին
Մերժուած չարաչար,
Խոյ մըն էր մորթած փոխան իր զաւկին:

Երկինքներու մէջ կը մնունէր արեւ,
Ու կը հընչէին լեռներուն վըրայ
Մահուան կոչնակներ:

Ոչ որ պիտ կըրնար, նոյնիսկ Շհովան,
Նորոգել, բուժել իր բեկուած հոգին,
Նետուած երկնքի բարձունքներէն վար:

Ծերացած ու լուռ
Կ'իջնէր լեռնէն վար,
Մահուան թեւերով հովը կը հեւար
Բըլուրէ բըլուր,
Մարելով սըրտին լոյսերը նըւաղ:
Սիրել մէ'կ սիրով,
Բայց չըկարենալ մեռնիլ անոր մէջ,
Յօժարիլ մորթել զաւակն իր միակ,
Սակայն մերժուիլ:

Ապրիլ տազնապը, պարտուելու չափ
Իր մեծ երազէն,
Բայց չըկարենալ ա'հ հասնիլ Անոր:
Լեռներու կըշտին կ'երկարին շուքեր,
Աբրահամ տըրտում յաւերժ ծերացած,
Կ'իջնէր լեռնէն վար:

Իր քովէն անխօս կ'երթար Իսահակ
Շուքի մը պէս սեւ:

Երուսաղիմ

Ե.Գ.ԽԼԱՐԴ